

Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության
20. 01. 2026թ.

թիվ 11/02-20.01.2026 որոշմամբ

Վարչության նախագահ

..... Ա. Առաքելյան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» Բաց
Բաժնետիրական Ընկերություն**

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԵՐԵՎԱՆ 2026

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի հասարակությանը և շրջակա միջավայրին վերաբերող քաղաքականությունն է շարունակաբար բարելավել իր գործունեությունը նշված ոլորտում՝ խրախուսելով այնպիսի ծրագրեր, որոնք հասարակական և շրջակա միջավայրի պահպանության առումով կայուն են: Մենք պարտավորված ենք աշխատել Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) հասարակական, շրջակա միջավայրի պահպանության և այլ իրավական պահանջներին համապատասխան:

Մենք ստանձնել ենք շրջակա միջավայրի պահպանության պատասխանատվություն հետևյալի միջոցով՝

- խրախուսելով շրջակա միջավայրի պահպանման պրակտիկա և իրազեկության բարձրացում թե՛ մեր աշխատակիցների, և թե՛ մեր հաճախորդների շրջանում,
- միավորելով շրջակա միջավայրի պահպանման հարցերը և ազդեցությունները մեր որոշումների կայացման գործընթացում,
- ձգտելով շարունակաբար բարելավել շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված գործունեությունը և նվազեցնելով հասարակական ազդեցությունը և գործողությունների վնասները՝ մեր ներկա և հետագա միջոցառումներն իրականացնելիս շրջակա միջավայրի պահպանման քաղաքականությունը պարբերաբար վերանայելու միջոցով:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույնով սահմանվում է հասարակությանը և շրջակա միջավայրին չվնասող նախագծերին աջակցելու «ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ» ԲԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված Բանկի աշխատակիցների կողմից իրականացվող աշխատանքների ընթացակարգը:
- 1.2. Սույն ուղեցույցը կիրառվում է Բանկի ներդրումային գործառնությունների բոլոր տեսակների ընթացքում՝ մասնավոր և այլ ընկերությունների ուղղակի վարկավորման (կորպորատիվ և նախագծային ֆինանսավորումը ներառյալ) և փաստաթղթային գործառնությունների գործիքների (երաշխիքներ, ակրեդիտիվներ, սեքյուրիտիզացիա) կիրառման ժամանակ:
- 1.3. Սույն ուղեցույցը կիրառվում է նաև Բանկի սպառողական վարկավորմանը, եթե վարկի նպատակը բնապահպանական շահավետ գործունեությունն է: Դրան կարող են պատկանել, բայց սահմանափակված չեն էներգախնայողության միջոցառումները, վերականգնվող էներգիայի համակարգերի տեղադրումը և այլ բարելավումներ, որոնք ապահովում են ակնհայտ բնապահպանական օգուտներ:
- 1.4. Սույն ուղեցույցը նկարագրում է կիրառելիության այն մեթոդոլոգիան, որով պետք է առաջնորդվեն Բանկի աշխատակիցները կազմակերպությունների կորպորատիվ բացահայտման պահանջները վերլուծելու ժամանակ: Այս մեթոդոլոգիան, կախված Բանկի կողմից կատարվող վերլուծության բնույթից և հաճախորդի բիզնեսի տեսակից, տարբերվում է: Սույն ուղեցույցը սահմանում է նախագծի ողջ ընթացքում հասարակական և շրջակա միջավայրի (այսուհետ՝ ՀՇՄ) պահպանմանն ուղղված Բանկի վերլուծության և վերահսկողության պարտականությունները:

1.4. Ապահովել, որպեսզի ներդրումները համապատասխանեն ազգային և միջազգային բնապահպանական և սոցիալական օրենքներին և կարգավորումներին, այդ թվում՝ Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) Անվտանգության Քաղաքականության հայտարարագրին (ԱՔՀ) (2009):

2. ՀՇՄ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

- 2.1. Բանկի կողմից ներդրումային գործառնություններ իրականացնելու, ֆինանսական ծառայություններ մատուցելու, տեխնիկական աջակցման և խորհրդատվական գործունեության ժամանակ ՀՇՄ վերլուծության շրջանակները որոշելու նպատակով կատարվում են հետևյալ քայլերը. *Բանկի՝ ստորև նշված աշխատակիցները ներգրավված են ԲՄԿՀ-ի իրականացման տարբեր ասպեկտներում՝*
 - 2.1.1. *Մասնաճյուղերի առևտրային վարկերի մասնագետները, Կորպորատիվ վարկավորման բաժնի վարկային մասնագետները, Փոքր և Միջին վարկավորման բաժնի և Գյուղատնտեսական վարկերի բաժնի մասնագետները (այսուհետ որպես «Վարկային մասնագետներ») պատասխանատու են՝ հաճախորդների/համապատասխան պաշտոնատար անձանց/ հետ գրույցների, այցելությունների, փաստաթղթերի հավաքագրման և առաջարկվող գործարքի համապատասխան բույտվությունների միջոցով բացահայտել հաճախորդի գործունեության մեջ առկա Բ/Մ ռիսկերը: Վարկային մասնագետները պատասխանատվություն են կրում Բնապահպանական և Սոցիալական Դասակարգման ցանկից նախնական դասակարգում իրականացնելու համար (Հավելված 4). Վարկային մասնագետները պատասխանատու են նաև Հարկադիր Վերաբնակեցման Ազդեցության Ցանկի /ստուգաթերթ/ (այսուհետ որպես՝ ՀՎ Ցուցակ/ստուգաթերթ/)(Հավելված 5) և Բնիկ ժողովուրդների վրա Ազդեցության ստուգաթերթ լրացման համար (Հավելված 6)՝ կատարելով ՀՎ և ԲԺ ռիսկերի նախնական դասակարգում:*
 - 2.1.2. *Վարկային մասնագետի կողմից արված նախագծի նախնական դասակարգման հիման վրա՝ Բանկի Վարչության կողմից նշանակված Բ/Մ մասնագետը նորից ստուգում է լրացված ցանկը /հարցաշարը/ և տեղեկատվությունը փոխանցում է Վարչության կողմից նշանակված Բ/Մ ավագ մասնագետին (այսուհետ որպես՝ «Բ/Մ հարցերի կառավարման ղեկավար»):*
 - 2.1.3. *ՀՇՄ Կառավարման Համակարգի ղեկավարման և վերահսկման համար պատասխանատու ավագ աշխատակիցը, որը նշանակվում է Բանկի վարչության կողմից, (այսուհետ՝ ՀՇՄ Կառավարման Ղեկավար) կազմակերպում է ՀՇՄ նախնական քննարկման ժողով,*
 - 2.1.4. *Բանկի վարչության կողմից նշանակված և ՀՇՄ Կառավարման Համակարգի ամենօրյա գործարկման և վերահսկման համար պատասխանատու ՀՇՄ մասնագետը մասնակցում է*

նախնական քննարկման ժողովին, որի ընթացքում նախագիծը դասակարգվում է, ինչը որոշում է գնահատման հետևյալ քայլերը և ինտենսիվությունը,

2.1.5. նախագիծը սկսելու որոշում կայացնելուց հետո ՀՇՄ Մասնագետը սկսում է նախագծի վերլուծությունը և գնահատումը,

2.1.6. համապատասխան վարկային մասնագետը և ՀՇՄ մասնագետը ստուգում են նախագծի համապատասխանությունը կամ հակասությունը Բանկի «Բացառությունների Ցանկին» (Հավելված 1):

2.2. ՀՇՄ Կառավարման Ղեկավարը պատասխանատու է՝

2.2.1. նախնական քննարկման ժողովի գումարման համար,

2.2.2. սույն ուղեցույցի համաձայն նախագծի ՀՇՄ վերլուծության շրջանակները որոշելու նպատակով ՀՇՄ Մասնագետին անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրելու համար,

2.2.3. նախնական քննարկման ժողովում մասնակցելու կամ դրանում մասնակցող անձնակազմի նշանակման համար:

2.3. ՀՇՄ Մասնագետը պատասխանատու է՝

2.3.1. նախագծի դասակարգման համար,

2.3.2. սույն ուղեցույցի համաձայն հետագա վերլուծության անհրաժեշտությունը և վերլուծության շրջանակները որոշելու համար, և

2.3.3. հետագա վերլուծության անհրաժեշտություն չունեցող նախագծերի վերաբերյալ ՀՇՄ Կառավարման Ղեկավարից պարզաբանումներ ստանալու համար:

2.3.4. ՀՇՄ տարեկան հաշվետվության կազմման համար (հավելված 7): Տարեկան

հաշվետվությունը կազմվում է յուրաքանչյուր տարի, բայց ոչ ուշ քան ֆինանսական տարվա ավարտից հետո 90րդ օրը: Հաշվետվությունը ներկայացվում է վարկատու կազմակերպություններին եթե այդպիսի պահանջ առկա է:

ՀՇՄ ռիսկի կառավարման գործընթացում ներգրավված վարկային մասնագետները ՀՇՄ կառավարման համակարգի արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով կանոնավոր կերպով ՀՇՄ Կառավարման Ղեկավարի և մասնագետի կողմից կազմակերպված դասընթացներ են անցնում:

3. ՌԻՍԿԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

3.1. Ըստ ռիսկի առաջադրված նախագծերը դասակարգվում են հետևյալ կերպ.

3.1.1. **Կատեգորիա A՝** Նախագիծը ամենայն հավանականությամբ կունենա էական անբարենպաստ բնապահպանական ազդեցություն, որը զգալուն է, բազմազան կամ աննախադեպ: Հնարավոր ազդեցությունը համարվում է «զգալուն», եթե այն չվերականգնվող է (օրինակ՝ հանգեցնում է խոշոր բնական բնակավայրերի կորստի), ազդում է խոցելի խմբերի կամ էթնիկ փոքրամասնությունների վրա, ենթադրում է ակամա տեղահանում կամ վերաբնակեցում կամ ազդում է զգալի մշակութային ժառանգություն հանդիսացող վայրերի վրա: Տվյալ դեպքում պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության ամբողջական գնահատում: Առաջարկվող նախագիծը դասակարգվում է A դասի մեջ, եթե կա հավանականություն, որ այն կարող է հանգեցնել հարկադիր վերաբնակեցման լուրջ ազդեցությունների: Վերաբնակեցման նախագծի, այդ թվում՝ սոցիալական ազդեցությունների գնահատման անհրաժեշտություն կա: Ծրագրի հարկադիր վերաբնակեցման կատեգորիան որոշվում է վերջինիս առավել զգալուն բաղադրիչի տեսանկյունից՝ կամավոր վերաբնակեցման ազդեցությունների առումով: ԱԶԲ-ի կողմից աջակցվող նախագծի հարկադիր վերաբնակեցման ազդեցությունները համարվում են էական, եթե դրանք կարող են թողնել ազդեցություն 200 և ավելի մարդկանց վրա, որը սահմանվում է որպես՝ (i) ֆիզիկապես տարհանված իրենց բնակարաններից, կամ (ii) կորցնում են իրենց արտադրական ակտիվների 10 և ավելի տոկոսը (եկամտի գններացում): Առաջարկվող նախագիծը դասակարգվում է A դասի մեջ, եթե հավանականություն կա, որ այն կարող է թողնել հետևանքներ Բնիկ Ժողովուրդների վրա: Պահանջվում է Բնիկ Ժողովուրդների վերաբերյալ Նախագիծ, ներառյալ՝ սոցիալական ազդեցությունների գնահատում: ԱԶԲ-ի կողմից աջակցվող նախագծի էական ազդեցությունները Բնիկ Ժողովուրդների տեսանկյունից որոշվում են գնահատելով՝ (i) ազդեցության մեծությունը (a) հողի և բնական ռեսուրսների օգտագործման և հասանելիության սովորական իրավունքների; (b) սոցիալ- տնտեսական կարգավիճակի; (c) մշակութային և համայնական ամբողջականության (d) առողջության, կրթության, կենսապահովման և սոցիալական ապահովության կարգավիճակի; (e) Բնիկ Ժողովուրդների ճանաչման; և տուժած տեղաբնակ համայնքի խոցելիության մակարդակի տեսանկյուններից:

3.1.2. **Կատեգորիա B՝** Ծրագիրը կարող է ունենալ յուրահատուկ բնապահպանական ազդեցություններ, որոնք շատ յուրահատուկ են և նրանցից քչերն են չվերականգնվող: Ծրջակա միջավայրի հնարավոր բացասական ազդեցությունները ազգաբնակչության կամ շրջակա միջավայրի համար կարևոր վայրերի վրա ավելի քիչ վնասակար են, քան A կատեգորիայի նախագծերի դեպքում: Այստեղ պահանջվում է միայն հիմնական ազդեցության գնահատում: Նախագիծը դասակարգվում է որպես B, եթե այն կարող է ազդել 200-ից քիչ անձանց վրա, որը սահմանվում է՝ (i) ֆիզիկապես տարհանված իրենց բնակարաններից, (ii) կորցնում են իրենց արտադրական ակտիվների 10 և ավելի տոկոսը (եկամտի գեներացում) և հնարավոր է ունենա ազդեցություն բնիկ ժողովուրդների վրա:

3.1.3. **Կատեգորիա C՝** Նախագիծը, ամենայն հավանականությամբ, կունենա չնչին կամ ոչ անբարենպաստ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, և չի թողնի որևէ հետևանք հարկադիր վերաբնակեցման և բնիկ ժողովուրդների վրա: Բնապահպանական և սոցիալական հավելյալ գնահատման անհրաժեշտություն չկա:

3.2. Վարկային մասնագետների կողմից կատարվող վերլուծությունները

C կատեգորիայի բիզնեսների դեպքում, վարկային մասնագետների համար սովորաբար հնարավոր է լինում ինքնուրույն գնահատել բիզնեսի բնապահպանական և հասարակական կողմը՝ առանց այդ բնագավառների մասնագետներ ներգրավելու: Սա սովորաբար մեծացնում է Բանկի կողմից տվյալ ընկերության բիզնեսում առկա խնդիրների ըմբռնումը, նաև պատկերացում տալով համապատասխան բնապահպանական և հասարակական խնդիրների մասին: Օրինակ, այնպիսի խնդիրները, ինչպիսիք են հումքի մթերումը և պահպանումը, թափոնները, ջրի և էներգիայի մատակարարման կառավարումը, աշխատողների առողջությունն ու անվտանգությունը, պատահարների հաճախությունը և աշխատանքային հարաբերությունները, անմիջական ազդեցություն ունեն ծախսերի, արտադրության և շահույթի վրա: Հաճախորդի անձնակազմի հետ քննարկումների ժամանակ, վարկային մասնագետների կողմից օգտագործվում է Հավելված 2-ում ներկայացված բնապահպանական ու հասարակական խնդիրների վերլուծության ձևաչափը (այսուհետ՝ ԲՀԽՎԶ): Վարկային անձնակազմը պետք է քննարկի այս խնդիրները հաճախորդի համապատասխան անձնակազմի հետ, որպեսզի պատասխաններ ստանա և ապահովի հաճախորդի անձնակազմի ըմբռնումը հետևյալի վերաբերյալ.

- որքանով են այս խնդիրները կարևոր (կամ ոչ) բիզնեսի համար,
- այս ոլորտներում ծախսերի արդյունավետությունը պահպանելու համար հաճախորդի կողմից ձեռնարկված կամ նրանցից պահանջվող քայլերը:

Վարկային մասնագետները նաև պետք է համոզվեն, որ հաճախորդի ղեկավարությունը բավարար պատկերացում և ունակություն ունի՝ կառավարելու բնապահպանական և հասարակական ռիսկը:

A և B կատեգորիաների ծրագրերի համար իրականացվում է ավելի մանրամասն գնահատում: Ի լրումն մանրամասն վերլուծության, վարկային մասնագետը լրացնում է Հավելված 2-ում ներառված Ծրջակա միջավայրի պահպանման և հասարակական ռիսկի նախնական վարկանշման աղյուսակը՝ պարզելու տվյալ նախագծի ռիսկի սահմանաչափը: C կատեգորիայի ծրագրերի համար ռիսկի սահմանաչափի հաշվարկը հարկավոր չէ իրականացնել:

Մանրամասն վերլուծությունը և ռիսկի սահմանաչափի հաշվարկը վարկային մասնագետը տրամադրում է ՀՇՄ մասնագետին, որը դրանք ներկայացնում ՀՇՄ Կառավարման Ղեկավարին՝ վարկային ներդրումների մասին որոշումներ կայացնելիս հաշվի առնելու նպատակով:

ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ ԲԲԸ-ն չի օգտագործի ԱԶԲ-ի միջոցները այն ենթաժրգրերի բիզնես գործունեության համար, որոնք դասակարգված են որպես A կատեգորիա շրջակա միջավայրի համար և/ կամ A կամ B կատեգորիա հարկադիր վերաբնակեցման և բնիկ ժողովուրդների համար:

4. ՈՒՂՂԱԿԻ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ. ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԼՈՒ ԾՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Ուղղակի վարկավորման առաջին փուլի ընթացքում ՀՇՄ քննարկումը և նախագծի հաստատումը (ղեկավարության կողմից) կատարվում է հետևյալ հերթականությամբ.

4.1.1. ուղղակի վարկավորման նախագծի ՀՇՄ պահպանման նախնական պահանջների որոշում,

4.1.2. հաճախորդի հետ քննարկումը սկսելու նպատակով ՀՇՄ Կառավարման Ղեկավարին տեղեկացում տվյալ պահանջների վերաբերյալ:

- 4.2. Վարկի գնահատման փուլում վարկային ծրագրերն ուսումնասիրվում են շրջակա միջավայրի պահպանման ՀՀ գործող օրենսդրության համաձայն: Նախագծերը պետք է ստուգվեն համապատասխան հողատարածքների վերաբերյալ օրենքների կամ այլ գործող օրենքների համաձայն՝ գույքի ձեռք բերման և օտարման տեսանկյունից: Անհրաժեշտության դեպքում, հաճախորդներից պահանջվում է իրենց գործունեության ոլորտին վերաբերող ներքոնշյալ օրենքների համապատասխան ներկայացնել թույլտվություններ և վկայականներ՝
- 4.2.1. ՀՀ ջրային օրենսգիրք,
 - 4.2.2. «Մթնոլորտային օդի պահպանման մասին» ՀՀ օրենք,
 - 4.2.3. «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք,
 - 4.2.4. «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության պահպանության մասին» ՀՀ օրենք,
 - 4.2.5. «Թափոնների մասին» ՀՀ օրենք,
 - 4.2.6. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք,
 - 4.2.7. «Բնապահպանական և Բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք
 - 4.2.8. այլ իրավական ակտեր:
- 4.3. ՀՇՄ մասնագետը վարկային մասնագետի հետ միասին ուսումնասիրում է հաճախորդների ներկայացրած փաստաթղթերը (տվյալ ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ պահանջվող սերտիֆիկատներ, լիցենզիաներ, թույլտվություններ, ծառայությունների գնման պայմանագրեր այլ ընկերությունների հետ) և արձանագրում բացահայտումները Հավելված 2-ում ներառված Շրջակա միջավայրի պահպանման պետական պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվության ձևաչափում, որն էլ հաշվի է առնվում ներդրումների մասին որոշումների կայացման գործընթացում:
- 4.4. Կախված ունեցած տեղեկատվությունից՝ Բանկի վերլուծության պահանջները կատարելու համար կարող են պահանջվել այլ մասնագետներ: Այս փուլում, հնարավորության դեպքում, ՀՇՄ Մասնագետի հետ համաձայնեցնելով, անհրաժեշտ է ընտրել աջակցման խմբի այլ հնարավոր անդամների (օրինակ՝ մասնաճյուղերի, Վարկավորման վարչություն աշխատակիցներին): Բազմանդամ աջակցման խումբը ստեղծելուց հետո, ՀՇՄ Կառավարման Ղեկավարի հետ համաձայնեցնելով, հաճախորդի պահանջները բավարարելու նպատակով կազմվում է հաճախորդի և խմբի տարբեր անդամների միջև հանդիպումների փուլային ժամանակացույցը:
- 4.5. Կատարվում են ստորև բերված քայլերը՝
- 4.5.1. հետագա վերլուծություն չի պահանջվում այն նախագծերի համար, որոնցում Բանկը ունի նախկինում արդեն կատարված ներդրումներ, և բավարարվում են բոլոր ներքոնշյալ պայմանները,
 - 4.5.2. բանկը նախկինում իրականացրել է ՀՇՄ վերլուծություն և այն համապատասխանում է սույն ուղեցույցի պահանջներին,
 - 4.5.3. տվյալ ներդրումը վերահսկվել է նախորդող 12 ամսվա ընթացքում և դրա կատարումը որակվել է սույն ուղեցույցի պահանջներին համապատասխանող,
 - 4.5.4. նոր ներդրումը չի հանգեցնի նախագծի հետ կապված որևէ ՀՇՄ ազդեցության ակնհայտ փոփոխմանը: Սակայն, գործակիցները և հաշվետվությունների պահանջները կփոփոխվեն՝ հաշվի առնելով տվյալ նոր ներդրումը:
- 4.6. Ստացվում և վերլուծվում է նախագծի սկզբնական գնահատման տեղեկատվությունը և հնարավորության սահմաններում որոշվում են՝
- 4.6.1. Պոտենցիալ մտահոգիչ սոցիալական խնդիրները պետք է ներառեն աշխատուժը և համապատասխանեն միջազգայնորեն ընդունված աշխատանքային հիմնական չափանիշներին, և սեռական շահագործման, հարձակման և ոտնձգության դեմ միջազգային լավագույն պրակտիկային:
 - 4.6.2. հաճախորդի ՀՇՄ կառավարման մակարդակը, և
 - 4.6.3. շրջակա միջավայրի վրա նախագծի հնարավոր ազդեցությունների մակարդակը (շոշափելի մեծ և վնասակար կամ յուրահատուկ և սահմանափակ կամ նվազագույն):
- 4.7. ՀՇՄ Կառավարման Ղեկավարի հսկողությամբ կատարվում են նախնական գնահատման այցելություններ հաճախորդի գործունեության տարածքներ այն դեպքերում, երբ՝
- 4.7.1. տրամադրված տեղեկատվությունը բավարար չէ ՀՇՄ հաշվետվությունը կազմելու համար, և
 - 4.7.2. նախագծի բնույթից և բարդությունից ելնելով կամ դրա հետ կապված հատուկ հարցեր քննարկելու նպատակով ՀՇՄ Մասնագետը անհրաժեշտ է համարում այցելել հաճախորդին,

- 4.7.3. մինչև գնահատման գործընթացը սկսելը, հնարավորության դեպքում, անհրաժեշտ է որոշել ՀՇՄ վերլուծության ընթացքում աջակցության նպատակով արտաքին փորձագետ վարձելու պահանջը, կամ հաճախորդին տեղեկացնել, որ իր գործունեության գնահատման նպատակով անհրաժեշտ է վարձել մեկ կամ ավելի արտաքին փորձագետ(ներ),
- 4.7.4. ՀՇՄ Կառավարման Ղեկավարին ծանուցվում է ՀՇՄ տեսակետից նախագծի սպասվելիք հիմնական ազդեցությունների վերաբերյալ:
- 4.8. ՀՇՄ Կառավարման Ղեկավարը պատասխանատու է՝
- 4.8.1. սույն ուղեցույցի համաձայն նախագծի համար կատարվող հասարակական և շրջակա միջավայրի պահպանման վերլուծության կիրառելիությունը որոշելու նպատակով ՀՇՄ Մասնագետին տեղեկատվություն տրամադրելու համար,
- 4.8.2. Բանկի ՀՇՄ հիմնական պահանջները հաճախորդին տրամադրելու համար,
- 4.8.3. մինչև գնահատման գործընթացը սկսելը հաճախորդին այցելելու անհրաժեշտությունը ՀՇՄ Մասնագետի հետ համատեղ որոշելու համար:
- 4.9. ՀՇՄ Մասնագետը պատասխանատու է՝
- 4.9.1. կիրառվող կատարման պահանջները որոշելու համար,
- 4.9.2. մինչև գնահատման գործընթացը սկսելը հաճախորդին այցելելու անհրաժեշտությունը ՀՇՄ Կառավարման Ղեկավարի հետ համատեղ որոշելու և այդ այցելությունը կատարելու համար,
- 4.9.3. ՀՇՄ Կառավարման Ղեկավարին ՀՇՄ տեսակետից նախագծի սպասվելիք հիմնական ազդեցությունների վերաբերյալ ծանուցելու համար:

4.10 Արեվային բաղադրիչներով վարկերի գտում և դիտարկում

4.10.1. ԾՄ (Շրջակա միջավայրի և սոցիալական) մասնագետը պետք է կիրառի ընդլայնված գտման ընթացակարգեր բոլոր այն վարկերի համար, որոնք ներառում են արևային բաղադրիչներ՝ այդ թվում տանիքներին կամ հողային մակերեսների վրա տեղադրված ֆոտովոլտային համակարգեր՝ տնային տնտեսությունների, ՓՄՁ և Կորպորատիվ բիզնեսների համար:

4.10.2. Նախնական գնահատման ընթացքում պետք է որոշվի՝

- Հավանական բնապահպանական ազդեցությունները, ներառյալ արևային վահանակների և մարտկոցների թափոնների կառավարման հարցերը, ազդեցությունը տեղական կենսաբազմազանության վրա, էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև աշխատանքի առողջության և անվտանգության նկատառումները:
- Հավանական սոցիալական ազդեցությունները, ներառյալ հողի օգտագործման կամ վարձակալության պայմանագրերը, շահագրգիռ կողմերի ներգրավումը և աշխատուժի հետ կապված հարցերը:

4.10.3. Վարկառուն պետք է տրամադրի գտման գործընթացը հաստատող համապատասխան փաստաթղթեր, այդ թվում, սակայն չսահմանափակվելով՝

- Բնապահպանական ազդեցության գնահատման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի պաշտպանության, թափոնների կառավարման և սանիտարահիգիենիկ անվտանգության վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ պահանջվող թույլտվություններ, հաստատումներ կամ վկայականներ:
- Արևային բաղադրիչների տեխնիկական բնութագրերն ու վկայականները:

4.10.4. ԾՄ մասնագետը, վարկային մասնագետի հետ համագործակցելով, պետք է դիտարկի ներկայացված փաստաթղթերը և արդյունքները գրանցի **Հավելված 8 – Արեվային բաղադրիչներով ենթավարկերի ԾՄ ստուգաթերթում**, որը պետք է հաշվի առնվի վարկի հաստատման որոշումների կայացման ընթացքում:

4.10.5. Անհրաժեշտության դեպքում կարող են ներգրավվել լրացուցիչ մասնագետներ (օր.՝ բնապահպանական ինժեներներ, տեխնիկական խորհրդատուներ)՝ արևային նախագծի առանձին ասպեկտների վերանայման համար: ԾՄ մասնագետը՝ ԾՄ կառավարման ղեկավարի հետ համատեղ,

պետք է կազմի փուլային ժամանակացույց՝ այս մասնագետների և վարկառուի հետ աշխատանքային փոխգործակցության համար՝ ապահովելով ժամանակին և համապարփակ գնահատում:

4.10.6. Նախնական գնահատման այցեր տարածք պետք է իրականացվեն, եթե՝

- Վարկառուի տրամադրած տեղեկատվությունը բավարար չէ ռիսկերի գնահատման համար, կամ
- Արեգակնային կայանի բնույթը, ծավալը կամ բարդությունը պահանջում են տեղում գնահատում:

4.10.7. Այն նախագծերի դեպքում, որտեղ բանկը արդեն ունի արևային բաղադրիչների հետ կապված ներդրումներ և՝

- Նախկինում իրականացվել է ՇՄ վերանայում՝ Բանկի ՇՄԿՀ (Շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգի) ուղեցույցներին համապատասխան,
- Նախորդ ներդրումը վերահսկվել է վերջին 12 ամսվա ընթացքում և համարվել է համապատասխան, և
- Սոցիալական կամ բնապահպանական ազդեցություններում էական փոփոխություն չի ակնկալվում, լրացուցիչ վերանայում անհրաժեշտ չէ, սակայն ՇՄ պայմանագրային դրույթները և հաշվետվությունները պետք է թարմացվեն՝ նոր ենթավարկը ներառելու համար:

4.10.8. Պարտականություններ.

- **ՇՄ կառավարման ղեկավարը** պետք է՝
 - Տա ցուցումներ արևային ենթավարկերի համար կիրառվող ՇՄ պահանջների վերաբերյալ,
 - Որոշի նախնական տեղային այցի անհրաժեշտությունը՝ ՇՄ մասնագետի հետ համաձայնեցված:
- **ՇՄ մասնագետը** պետք է՝
 - Կիրառի արևային ենթավարկերի ընդլայնված գտման ստուգաթերթը,
 - Խորհուրդ տա զարգացման հնարավոր ազդեցությունների և անհրաժեշտ մեղմման միջոցառումների վերաբերյալ,
 - Իրականացնի նախնական գնահատման այցեր՝ անհրաժեշտության դեպքում,
 - Արդյունքները լրացնի Հավելված Annex 8-ում՝ վարկի հաստատման ընթացքում հաշվի առնելու նպատակով:

4.10.9. Բոլոր արևային բաղադրիչներով ենթավարկերը կարող են անցնել վճարման փուլ միայն այն դեպքում, երբ ընդլայնված գտումն ու պատշաճ ուսումնասիրությունը լիարժեք և բավարար կերպով կատարված և արձանագրված են:

5. ՈՒՂՂԱԿԻ ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ. ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

5.1. Նախագծի վերլուծության գործընթացի գնահատման փուլում ուղղակի վարկավորման նախագծերի համար կատարվող ՀՇՄ վերլուծությունը բաղկացած է հետևյալ քայլերից՝

- 5.1.1. նախագիծը գնահատելու համար տեղեկատվության և գործողությունների պլանի քննարկում և բացթողումների բացահայտում (այդպիսիք առկա լինելու դեպքում),
- 5.1.2. հաճախորդի ՀՇՄ կառավարման համակարգի քննարկում և բացթողումների բացահայտում (այդպիսիք առկա լինելու դեպքում),
- 5.1.3. ցանկացած լրացուցիչ գործողությունների որոշում, որոնք վերը նշված ցանկացած բացթողումները վերացնելու նպատակով ընդգրկվելու են հաճախորդի գործողությունների պլանում,
- 5.1.4. անհրաժեշտության դեպքում, հաճախորդի գործունեության վայրի այցելություն,
- 5.1.5. հաճախորդի համար լրացուցիչ հնարավորությունների որոշում և դրանց իրականացմանը աջակցող միջոցների ձեռնարկում,
- 5.1.6. նախագծի դասակարգում, և
- 5.1.7. նախագծի վերաբերյալ տեղեկատվության մուտքագրում ԲՀԽՎՁ մեջ:

5.2. Կատարվում են ստորև բերված քայլերը՝

- 5.2.1. պահանջվում և ստացվում է նախագիծը գնահատելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Ստուգվում և հավաստվում է, որ շրջակա միջավայրի պահպանման գնահատման ուղղությունները համապատասխանում են նախագծի ազդեցության շրջանակներին,
- 5.2.2. հաճախորդից պահանջվում և քննարկվում է նրա կողմից նախագծի շրջանակներում կատարված ցանկացած բացահայտման կամ տրված բացատրությունների վերաբերյալ գրավոր տեղեկատվությունը,
- 5.2.3. պահանջվում է հաճախորդի ՀՇՄ-ի վերաբերյալ տեղեկատվությունը, քննարկվում այն՝ հիմնականում ուշադրություն դարձնելով՝
 - 5.2.3.1. հաճախորդի ՀՇՄ քաղաքականությանը և ընթացակարգերին,
 - 5.2.3.2. ընթացիկ կազմակերպչական կառուցվածքին և աշխատակազմին,
 - 5.2.3.3. կատարողականների վերահսկողության ընթացակարգերին,
 - 5.2.3.4. արդյունքների վերաբերյալ ղեկավարությանը տեղեկացնելու ձևերին,
 - 5.2.3.5. մինչ օրս գրանցված հաճախորդի ՀՇՄ կառավարման գրառումներին, և
 - 5.2.3.6. հաճախորդի «Շրջական միջավայրի կառավարման» ծրագրին, այդ թվում՝ թերությունները վերացնելու գործողությունների պլանին:
- 5.2.4. Սույն ուղեցույցի 3.2 կետի պահանջները կատարելուց հետո, որոշվում և հաստատվում է Բանկի վերլուծության պահանջները կատարելու նպատակով մասնագետների ցանկը և, ՀՇՄ Կառավարման Ղեկավարի և ՀՇՄ Մասնագետի վերահսկողությամբ, որոշվում են աջակցման թիմի այլ անդամները՝ արտաքին փորձագետները, արտադրության ճյուղի մասնագետները կամ Բանկի տարածքային ստորաբաժանումների և Վարկավորման վարչության աշխատակիցները ներառյալ: Բազմանդամ աջակցման խումբը ստեղծելուց հետո, ՀՇՄ Կառավարման Ղեկավարի հետ համաձայնեցնելով, հաճախորդի պահանջները բավարարելու նպատակով կազմվում է հաճախորդի և խմբի տարբեր անդամների միջև հանդիպումների փուլային ժամանակացույցը:
- 5.2.5. Ըստ պահանջի, անցկացվում է գնահատման գործընթացը: Այստեղ կարող են լինել այցելություններ հաճախորդի գրասենյակ, մեկ կամ ավելի արտադրական տարածքներ, դրանց հետ կապված տարածքներ և/կամ մատակարարների տարածքներ: Որոշ դեպքերում կարող են պահանջվել բազմաթիվ գնահատման գործընթացներ: Ստացված տվյալները գրանցվում են ԲՀԽՎՀ մեջ և տրամադրվում են ՀՇՄ Կառավարման Ղեկավարին:
- 5.2.6. Իրենց գործունեության ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված (օրինակ՝ շինարարական ընկերություններ, վառելանյութերի ոլորտում ծառայություններ մատուցող ընկերություններ)՝ հասարակական և շրջակա միջավայրի պահպանման հետ կապված զգալի ռիսկ ունեցող ընկերությունների վերլուծության ժամանակ Բանկը հաշվի է առնում նաև երրորդ անձանց ռիսկերը:

6. ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

6.1. Բնապահպանական և հասարակական մոնիտորինգը և հաճախորդների հաշվետվությունները

Բնապահպանական և հասարակական մոնիտորինգը գործարքի ողջ ժամանակահատվածի ընթացքում բնապահպանական և հասարակական ռիսկերին առնչվող տեղեկությունների պարբերական հավաքագրման և պահպանման գործընթացն է, որը իրականացվում է վարկային մասնագետների կողմից հաճախորդի կանոնավոր այցելությունների միջոցով: Այդ այցելությունները հիմնվում են Հավելված 3-ում նշված «Հասարակական և Շրջակա Միջավայրի Կատարողականի Մոնիտորինգի» ձևաթերթի վրա: Մոնիտորինգն անհրաժեշտ է, որովհետև բնապահպանական և հասարակական ռիսկերն այդ ժամանակահատվածի ընթացքում կարող են փոփոխվել: Մոնիտորինգը պետք է ուշադրության առնի հետևյալ հիմնական կողմերը.

- վարկառուի շարունակական համապատասխանությունը բնապահպանական, առողջապահական և անվտանգության օրենսդրությանը,
- վարկառուի շարունակական համապատասխանությունը վարկային պայմանագրում ներառված բոլոր բնապահպանական և/կամ հասարակական պայմաններին,
- կանոնակարգման միտումները. բնապահպանական/առողջապահական և անվտանգության/աշխատանքային օրենքների ու կանոնակարգերի փոփոխությունները կարող են ներկայացնել նոր չափորոշիչներ, որոնք չեն կարող դյուրությամբ ապահովվել վարկառուի

կողմից, այսպիսով երկու կողմերին էլ խոցելի դարձնելով ռիսկի ու պատասխանատվության նոր աղբյուրների նկատմամբ,

- փոփոխություններ վարկառուի կողմից իրականացվող գործունեությունում կամ գործընթացներում:

Որոշակի իրադարձություններ պետք է վարկային մասնագետներին հուշեն ուսումնասիրել վարկառուի գործունեության, կանոնակարգիչ դաշտի կամ այլ գործոնների ցանկացած փոփոխությունները, որոնք կարող են ազդել գործարքին առնչվող բնապահպանական ու հասարակական ռիսկի մակարդակի վրա: Նման դեպքերը ներառում են.

- փոփոխություններ գործունեությունում,
- համապատասխան բնապահպանական/առողջապահական և անվտանգության/աշխատանքային օրենսդրության փոփոխություններ,
- գործունեության թույլտվությունների ժամկետի սպառում,
- կանոնակարգիչ մարմնի կողմից ստուգումների, տույժերի, տուգանքների կիրառում վարկառուի նկատմամբ,
- հանրային բողոքներ կամ լրատվամիջոցներում բացասական լուսաբանում,
- ընկերության կողմից կատարվող ներդրումներ կամ բարելավումներ, և
- պատահարներ / դեպքեր (օրինակ՝ խոշոր արտահոսքեր):

Եթե վարկառուները շարունակում են խոշոր տուգանքներ վճարել բնապահպանական բնույթի շարունակվող խախտումների ու անհամապատասխանությունների համար, Բանկը պետք է այդ ձեռնարկություններին խրախուսի և օժանդակի՝ համապատասխանությունը ապահովելու նպատակով: Անգամ եթե նման տուգանքները սոսկ փոքր գործառնական ծախսեր են, դրանք կարող են ապագա խոշոր ծախսերի կամ պատասխանատվության ազդանշաններ հանդիսանալ:

Մոնիտորինգի հիմնական մասը պետք է առնչվի վարկառուներին. նրանք գործարքի պայմանագրով պետք է հանձն առնեն ներկայացնել հետևյալը.

- բնապահպանության գծով տարեկան կատարողականի համառոտ հաշվետվություններ (հիմնված ինքնամոնիտորինգի կամ կանոնակարգող մարմինների կողմից կատարվող մոնիտորինգի վրա) Բանկին, վերջինիս տեղեկացնելով բնապահպանական ու հասարակական նորմերին ցանկացած անհամապատասխանության և, առկայության դեպքում, Բնապահպանության Կառավարման Ծրագրի (այսուհետ՝ ԲԿԾ) գծով առաջընթացի մասին, և
- անհապաղ ծանուցում այն պատահարների ու դեպքերի մասին, որոնք նշանակալի բացասական ազդեցություն ունեն կամ կարող են ունենալ շրջակա միջավայրի, հանրության կամ անձնակազմի առողջության ու անվտանգության վրա: Եթե պատահարները/դեպքերը ներառում է խոշոր աղտոտում, մահացություն, կամ հիվանդանոցային բուժում պահանջող բազմաթիվ լուրջ վնասվածքներ, կամ եթե այն հայտնի է դարձել հանրությանը՝ լրատվամիջոցներով կամ այլ կերպ:

6.2. ՀՀՄ մասնագետը վերլուծում է հաճախորդների կողմից ստացված վերոնշյալ տեղեկությունները: ՀՀՄ ղեկավարը արդյունքների մասին տեղեկացվում է տարեկան կտրվածքով՝ միջազգային ֆինանսական կազմակերպություններին ներկայացվող շրջակա միջավայրի պահպանության մասին արտաքին տարեկան հաշվետվությունն»ը և ներքին տարեկան հաշվետվություն պատրաստ»լու միջոցով: Ներքին կարգով, մոնիթորինգի իրականացման ժամանակ հաշվի են առնվում նաև շրջակա միջավայրի պահպանության խնդիրները, որոնց առկայության դեպքում գրանցվում են մոնիթորինգի հաշվետվության մեջ:

6.3. Սույն Սոցիալական և Բնապահպանական Կառավարման Ուղեցույցը անընդհատ բարելավելու համար ժամանակ առ ժամանակ կվերանայվի՝ կապված ՀՀ օրենսդրության մեջ բնապահպանական և սոցիալական խնդիրներին վերաբերող հարցերի փոփոխությունների հետ (հողի և աշխատուժի վերաբերյալ օրենքներ)

7. Կապալառու և Մատակարարների կառավարում

7.1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն պետք է համոզվի, որ բանկի կողմից ներգրավված բոլոր ենթակապալառուներն ու մատակարարները գործում են գործող իրավական, բնապահպանական, սոցիալական և կառավարման (ESG) ստանդարտներին համապատասխան՝ նվազագույնի հասցնելով իրենց գործունեության հետ կապված հնարավոր բնապահպանական և սոցիալական (ՇՄ) ռիսկերը: Այս պահանջը վերաբերում է բոլոր կապալառուներին, մատակարարներին և ծառայություններ

մատուցողներին, որոնք ներգրավված են բանկի նախագծերում կամ գնումների գործընթացներում: Այն ընդգրկում է ապրանքների մատակարարներին, ծառայությունների կապալառուներին և ցանկացած երրորդ կողմի մատակարարներին:

7.2. Հիմնական սկզբունքներն են.

- **Համապատասխանություն:** Կապալառուներն ու մատակարարները պետք է գործեն Հայաստանի օրենքներին և աշխատանքի, առողջության և անվտանգության, բնապահպանության պաշտպանության և հակակոռուպցիոն ոլորտներում միջազգային լավագույն փորձին համապատասխան:
- **Պատասխանատվություն:** Բանկը նախապատվությունը տալիս է այն գործընկերներին, որոնք ցուցաբերում են պատասխանատու ՇՄ վարքագիծ:
- **Թափանցիկություն:** Բոլոր համագործակցությունները պետք է պատշաճ կերպով փաստաթղթավորվեն, իսկ մոնիթորինգի արդյունքները՝ ներքին հաշվետվությամբ ներկայացվեն:

7.3. Մատակարարի կամ կապալառուի ներգրավումից առաջ բանկը պետք է.

1. Հավաքի և ուսումնասիրի ընկերության վերաբերյալ տեղեկատվությունը, ներառյալ իրավաբանական գրանցումը և նախորդ նախագծերի փորձը:
2. Գնահատի ՇՄ ցուցանիշները, ներառյալ՝
 - Աշխատանքային պրակտիկաները (օր.՝ արդար վարձատրություն, անվտանգ աշխատանքային պայմաններ, երեխաների կամ հարկադիր աշխատանքի բացակայություն),
 - Բնապահպանական ազդեցության կառավարումը (օր.՝ թափոնների կառավարում, էներգիայի օգտագործում),
 - Առողջության և անվտանգության գրանցված տվյալները:
3. Ստուգի՝ արդյոք ընկերությունը նախկինում ունեցել է իրավական խախտումներ կամ վեճեր վերահսկող մարմինների հետ:

7.4 Մատակարարների և կապալառուների շրջակա միջավայրի և սոցիալական (ՇՄՍ) գործունեության մոնիթորինգ

7.4.1 Բանկը իրականացնում է կապալառուների և մատակարարների շրջակա միջավայրի և սոցիալական (ՇՄՍ) գործունեության մոնիթորինգը՝ ռիսկահեն և համաչափ մոտեցմամբ: Կապալառուներին և մատակարարներին ՇՄՍ ռիսկի մակարդակները սահմանվում են՝ համաձայն ՎՁԵԲ-ի (EBRD) ոլորտային ռիսկերի դասակարգման (Հավելված 4):

7.4.2 Մոնիթորինգի մոտեցումը կարող է ներառել փաստաթղթերի ուսումնասիրություն, գրավոր հավաստիացումներ, միջադեպերի կամ բողոքների դիտարկում, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում, բարձր ռիսկային գործունեության համար տեղազննումներ:

Մոնիթորինգի հաճախականությունը կախված է սահմանված ՇՄՍ ռիսկի մակարդակից՝

- **Ցածր ռիսկ**՝ ըստ անհրաժեշտության կամ պայմանագրի վերանայման/երկարաձգման ընթացքում,
- **Միջին ռիսկ**՝ պարբերական մոնիթորինգ, որպես կանոն՝ տարեկան,
- **Բարձր ռիսկ**՝ ավելի հաճախակի մոնիթորինգ, որը կարող է ներառել տեղազննումներ կամ ուժեղացված հաշվետվություն:

Մոնիթորինգի իրականացման պատասխանատվությունը կրում է ՇՄՍ ռիսկերի կառավարման ստորաբաժանումը՝ կազմելով Կապալառուների և մատակարարների ՇՄՍ մոնիթորինգի ստուգաթերթ (Հավելված 9)՝ անհրաժեշտության դեպքում Բանկի գնումների ստորաբաժանումների աջակցությամբ՝ համաձայն ներքին ՇՄՍ կառավարման համակարգի (ESMS) և գնումների քաղաքականությունների:

7.4.3 Արձագանք անհամապատասխանությունը

Եթե հայտնաբերվում կամ ապացուցվում է կիրառելի ՇՄՍ կարգավորումների կամ պայմանագրային պահանջների խախտում, Բանկը կարող է պահանջել ուղղիչ գործողությունների իրականացում

համաձայնեցված ժամկետում, ուժեղացնել մոնիթորինգը, ներկայացնել պաշտոնական նախագրուշացումներ կամ կասեցնել կամ դադարեցնել պայմանագրային հարաբերությունները՝ համաձայն պայմանագրի դրույթների և կիրառելի օրենսդրության:

Հավելված 1. ԲԱՑԱՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Արտադրության կամ գործունեության ընթացքում օգտագործվող վնասակար կամ ստիպողական աշխատանք Բռնի աշխատուժն իրենից ներկայացնում է անձի կամքին հակառակ արված աշխատանք կամ ծառայություն՝ սպառնալիքի, ուժի կամ տուգանքների կիսմամբ) /վնասակար մանկական աշխատանք (Երեխաների աշխատուժն այն երեխաների զբաղվածությունն է, որոց տարիքը ցածր է ընդունող երկրի կանոնադրությամբ սահմանված նվազագույն տարիքից կամ իրականացվում է Աշխատանքի Միջազգային Կազմակերպության Կոնվենցիայի C138, Հոդ. 2-ի խախտումներով (<<Նվազագույն տարիքի վերբերյալ Կոնվենցիա>>)
2. 2. ՀՀ օր»նադրությամբ կամ միջազգային համաձայնագր»ով ապօրինի հանդիսացող որևէ գործուն»ություն կամ որևէ ապրանքի արտադրություն կամ առևտուր, ինչպես նաև միջազգային արգ»լքի կամ սահմանափակումն»րի տակ գտնվող, ինչպիսիք են ա) դ»դորայքի արտադրություն կամ առևտուր (արգ»լքի կամ սահմանափակումն»րի տակ գտնվող դ»դորայքի ցուցակը գտնվում է ՄՖԿ-ի Շրջակա Միջավայրի Բաժնում և <http://www.who.int> հղմամբ), պեստիցիդների/հերբիցիդների արտադրություն կամ առևտուր (արգելքի կամ սահմանափակումների տակ գտնվող պեստիցիդների/հերբիցիդների ցուցակը գտնվում է ՄՖԿ-ի Շրջակա Միջավայրի Բաժնում և <http://www.pic.int> հեղմամբ), բ) Օզոնը քայքայող նյութեր (այսուհետ որպես՝ <<ՕԶՆ>>) (Քիմիական միացություններ, որոնք օզոնի հետ ռեակցիայի մեջ մտնելով քայքայում են ստրատոսֆերայի օզոնը՝ առաջացնելով հայտնի <<օզոնային անցքեր>>: Մոնրեալի արձանագրության մեջ ներառված են ՕԶՆ-իցանկը, այդ նյութերի նպատակային նվազեցումը և օգտագործման դադարեցման ամսաթվերը: Տեղեկատվությունը հասանելի է <http://www.unep.org/ozone/montreal.shtml> հղմամբ և ՄՖԿ-ի Բնապահպանական բաժնում, գ) Պոլիքլոր բիֆենիլներ (այսուհետ՝ ՊԲԲ) պարունակող ապրանքների արտադրություն կամ առևտուր (ՊԲԲ-չափազանց բունավոր քիմիկատների խումբ: ՊԲԲ-ները հիմնականում գտնվում են 1950-1985 թ.թ. արտադրության յուղալցված էլեկտրական հոսանքի տրանսֆորմատորներում, կոնդենսատորներում) և այլ վտանգավոր քիմիկատներ (վտանգավոր քիմիկատների ցանկը հասանելի է <http://www.pic.int> հղմամբ), դ) Ոչնչացման վտանգի տակ գտնվող վայրի կենդանիների և բույսերի ներկայացուցիչների միջազգային առևտրի վերաբերյալ համաձայնագրով (այսուհետ՝ ՈՎՏԿԲՄԱՀ) - սահմանված կենդանիների և բույսերի առևտուր (ՈՎՏԿԲՄԱՀ-ում թվարկված ներկայացուցիչների ցուցակը գտնվում է ՄՖԿ-ի Շրջակա Միջավայրի Բաժնում և հասանելի է <http://www.cites.org> հղմամբ) և ե) և (ե) թափոնների անդրսահմանային առևտուր (Ինչպես սահմանված է Բազելյան Կոմիտեի կողմից, տես՝ <http://www.basel.int>):
3. Ձեռքի և զինամթերքի արտադրություն կամ առևտուր այդ թվում այլ ռազմական նյութեր¹:
4. Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ առևտուր: Սա չի վերաբերվում այն բժշկական, չափումներ կատարելու և այլ սարքավորումների ձեռք բերմանը, եթե ԱԶԲ-ը գտնում է, որ ռադիոակտիվ նյութերի առկայությունը դրանց մեջ չնչին է, կամ պաշտպանված է համապատասխան ձևով):

5. Չմեկուսացված ասբեստի արտադրություն կամ առևտուր (չի վերաբերվում 20%-ից պակաս ասբեստ պարունակող ասբեստա-ցեմենտային ծածկող նյութերի արտադրությանը կամ օգտագործմանը):
6. Տրոպիկական անտառներում առևտրային նպատակներով ծառեր կտրելու համար նախատեսված սարքերի արտադրություն կամ առևտուր (ծառերի պահպանման քաղաքականությամբ արգելված) (ՄՖԿ ՕՔ 4.36, Forestry (վերանայման ընթացքում է)):
7. Ծովային և ծովեզրյա ձկնորսության փորձեր, օր.՝ մեծածավալ պելագիկ ցանցերով և նուրբ ցանցերով ձկնորսություն, որը վնաս է հասցնում խոցելի և պաշտպանության տակ գտնվող տեսակներին և վնասում է ծովային կենսաբազմազանությանը և բնակիչներին (այն նախագծերի համար, որոնց ֆինանսավորումը նախատեսվում է միջազգային ֆինանսական կառույցների վարկային միջոցներով):
8. Ալկոհոլային խմիչքների, բացառությամբ գարեջրի և գինու, արտադրություն և առևտուր¹ (միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային միջոցներով ֆինանսավորման ենթակա նախագծերի դեպքում):
9. Ծխախոտի արտադրություն և առևտուր¹ (միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային միջոցներով ֆինանսավորման ենթակա նախագծերի դեպքում):
10. Դրամախաղերի, խաղատների և նմանատիպ գործունեություն իրականացնող այլ տնտեսվարող սուբյեկտներ¹ (միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային միջոցներով ֆինանսավորման ենթակա նախագծերի դեպքում):
11. Բիոբազմազանությանը կամ մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված ՀՀ օրենսդրությամբ կամ միջազգային կոնվենցիաներով արգելված միջոցառումներ (միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային միջոցներով ֆինանսավորման ենթակա նախագծերի դեպքում):
12. Փայտի կամ այլ անտառային արտադրանքների արտադրություն կամ առևտուր, բացի կայուն կերպով կառավարվող անտառներից (միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային միջոցներով ֆինանսավորման ենթակա նախագծերի դեպքում):
13. Ապրանքների առևտուր՝ առանց արտահանման կամ ներկրման համար պահանջվող լիցենզիաների կամ արտահանման կամ ներկրման երկրների կողմից տրված տրանզիտի լիազորման (միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային միջոցներով ֆինանսավորման ենթակա նախագծերի դեպքում):

¹ չի վերաբերվում նախագծի այն հովանավորողներին, որոնք տվյալ գործունեությամբ հիմնականում չեն զբաղվում: «Հիմնականում չեն զբաղվում» նշանակում է, որ տվյալ գործունեությունը միայն օժանդակ է նախագծի հովանավորողների հիմնական գործունեությանը):

14. Նավթի կամ այլ վտանգավոր նյութերի փոխադրում այնպիսի նավերով, որոնք չեն համապատասխանում Միջազգային նավատորմի կազմակերպության պահանջներին (միջազգային ֆինանսական հաստատությունների վարկային միջոցներով ֆինանսավորման ենթակա նախագծերի դեպքում):
15. Բարձր պահպանության արժեք ունեցող տարածքների¹ ոչնչացում²
16. Պոռնոգրֆա և/կամ մարմնավաճառություն
17. Ռասիստական և/կամ հակադեմոկրատական լրատվամիջոցներ
18. Չկնորսության անկայուն մեթոդներ, (օրինակ՝ պայթուցիկ ձկնորսություն և ցրված ցանցով ձկնորսություն ծովային միջավայրում՝ 2.5 կմ-ից ավելի երկարությամբ ցանցերի օգտագործմամբ)

¹Ոչնչացում նշանակում է(1) տարածքի ամբողջականության վերացում կամ կտրուկ նվազեցում, որը պայմանավորված է հողի կամ ջրի օգտագործման լուրջ և երկարաժամկետ փոփոխությամբ, կամ (2)բնակավայրի ձևափոխում այնպես, որ տարածքի կարողությունը պահպանել իր դերը կորում է:

² Պահպանության բարձր արժեք (HCV) ունեցող տարածքները սահմանվում են որպես բնական կենսամիջավայրեր, որտեղ այդ արժեքները համարվում են բացառիկ նշանակության կամ կրիտիկական նշանակության: Sten՝ <http://www.hcvnetwork.org>

Հավելված 2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀԱՃԱՆՈՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ – ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՎԱՐԿԱՆՇՈՒՄ (ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ A ԵՎ B ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ):

Հաճախորդի բիզնեսի բնույթը՝				
Անվանումը՝				
Հասցեն՝				
Գործունեության ոլորտը, աշխատողների քանակը, նախագծի կատեգորիան՝		, աշխատող, կատեգորիա՝		
Հիմնական խնդիրները արտադրության, արդյունաբերության ժամանակ՝				
☐	աշխատավայրում հեղուկ և կոշտ աղբի առկայություն	☐	աղմուկի բարձր մակարդակներ (կրկնվող կամ անընդհատ)	
☐	ուժեղ հոտեր, բուսավոր նյութերի առկայություն	☐	հրդեհի ռիսկ, հիգիենայի պահպանում	
☐	աղբաթափում	☐	ջրի օգտագործումը արտադրական պրոցեսներում	
☐	օդի պահպանումը արտանետումներից	☐	առողջության պահպանում և անվտանգություն	
Շրջակա Միջավայրի Պահպանման պետական պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվությունը՝				
☐		անհրաժեշտ բույլտվությունները (կցել պատճենները)		
☐		վերջին 2 տարվա ընթացքում ընկերության կողմից ՇՄՊ պետական պահանջները խախտելու համար վճարված տուգանքները (կցել վերջին վերստուգման հաշվետվությունը)		
☐		վերջին 2 տարվա ընթացքում տեղի ունեցած որևէ զգալի միջադեպեր կամ դեպքեր (օրինակ՝ հրդեհներ), որոնց արդյունքում մարդիկ են մահացել կամ ստացել են տարբեր լուրջ վնասվածքներ և/կամ զգալիորեն վնաս է հասցվել շրջակա միջավայրին		
☐		Բացառությունների ցանկին համապատասխանությունը Այո ☐ / Ոչ ☐		
Նախնական բնապահպանական և հասարակական ռիսկի վարկանշում՝				
Բիզնես գործունեություն	1	2	3	(2) x (3)
	☐ ցածր	1	40	☐ 40 միավոր
	☐ միջին	2		☐ 80 միավոր
	☐ բարձր	3		☐ 120 միավոր
Վարկի չափը (ԱՄՆ դոլար)	1	2	3	(2) x (3)
	☐ (< \$200,000)	1	20	☐ 20 միավոր
	☐ (\$200,000 - \$1,000,000)	2		☐ 40 միավոր
	☐ (> \$1,000,000)	3		☐ 60 միավոր
Վարկի ժամկետը	1	2	3	(2) x (3)
	☐ (< 6 ամիս)	1	20	☐ 20 միավոր
	☐ (6 ամսից – 2 տարի)	2		☐ 40 միավոր
	☐ (> 2 տարի)	3		☐ 60 միավոր
Գրավի տեսակ կամ վարձակալած ակտիվ	1	2	3	(2) x (3)
	☐ Իրացվելի ներդրումներ, ինչպիսիք են կանխիկ երաշխիքներն	1	20	☐ 20 միավոր
	☐ Հող առանց արդյունաբերական պատմության կամ հարակից արդյունաբերություն, հիմնական ակտիվներ, ոչ իրացվելի ընթացիկ ակտիվներ, ինչպես օրինակ՝ բաժնետոմսեր	2		☐ 40 միավոր
	☐ Արդյունաբերական պատմությամբ հող, աղտոտում կամ նման հարակից վայր	3		☐ 60 միավոր
Ընդամենը՝ միավոր				
Նախնական բնապահպանական և հասարակական ռիսկի վարկանիշ	☐ Բարձր	Բարձր միջակայք		250-300 միավոր
	☐ Միջին	Միջին միջակայք		150-249 միավոր
	☐ Ցածր	Ցածր միջակայք		100-149 միավոր
Վարկային մասնագետի անուն, ազգանուն՝				
Լրացման ամսաթիվ՝ « » « » 201 թ.				

Հավելված 3. ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ (ԿԻՐԱՌՎՈՒՄԷ ՄԻԱՅՆ A ԵՎ B ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՍԱՐ):

Հաճախորդի բիզնեսի բնույթը՝	
Անվանումը՝	
Հասցեն՝	
Գործունեության ոլորտը, աշխատողների քանակը, նախագծի կատեգորիան՝	, աշխատող, կատեգորիա՝
Հասարակական և Շրջակա Միջավայրի Կատարողականի Մոնիտորինգի տարրերը՝	
☐ հաճախորդի շարունակական համապատասխանությունը բնապահպանական, առողջապահական և անվտանգության օրենսդրությանը	
☐ փոփոխություններ հաճախորդի կողմից իրականացվող գործունեությունում կամ գործընթացներում	
☐ համապատասխան բնապահպանական/առողջապահական և անվտանգության/ աշխատանքային օրենսդրության փոփոխություններ	
☐ գործունեության ՀՇՄ թույլտվությունների ժամկետի սպառում	
☐ հաճախորդի նկատմամբ կանոնակարգիչ մարմնի կողմից ստուգումների, տույժերի, տուգանքների կիրառում	
☐ Մարդկանց հարկադիր վերաբնակեցման կամ կենսաապահովման պայմանների վրա բացասական ազդեցություն հաճախորդի գործունեության արդյունքում	
☐ Բացասական ազդեցություն տեղաբնիկների կամ այլ խոցելի խմբերի վրա հաճախորդի գործունեության ընթացքում	
☐ Տղամարդկանց և կանանց միջև անհավասարությունների ստեղծում կամ սրացում կամ բացասական ազդեցություն կենսաապահովման պայմանների վրա:	
☐ Աշխատողների առողջության, անվտանգության և ապահովության հետ կապված ռիսկեր (աշխատողների կացություն, վտանգի ռիսկ և այլն)	
☐ Հանրության անվտանգության, առողջության և ապահովության հետ կապված ռիսկեր ((օրինակ՝ մեծ վտանգներ, երթևեկության անվտանգություն, ներհոսքի կառավարում, ՄԻԱՎ / ՁԻԱՀ, դժբախտ պատահարների և այլն))	
☐ Աշխատանքային պայմանների և զբաղվածության պայմանների վրա ազդեցություն	
☐ հանրային բողոքներ կամ լրատվամիջոցներում բացասական լուսաբանում (կցել պատճենները)	
☐ հաճախորդի ընկերության կողմից կատարվող ներդրումներ կամ բարելավումներ	
☐ պատահարներ / դեպքեր հաճախորդի գործունեության ընթացքում	
Վարկային մասնագետի անուն, ազգանուն՝	
Լրացման ամսաթիվ՝ « » « » 201 թ.	

Հավելված 4: Բնապահպանական և Սոցիալական Ռիսկի դասակարգման գանկ –Վերանայված 2014:

		Ռիսկի մակարդակ		
Code NACE Rev. 2	Կարգ և Ենթակարգ	Բնապահպան.	Սոցիալական	Ընդհանուր
Բաժին A	Գյուղատնտեսություն, անտառտնտեսություն և ձկնորսություն			
1	Բուսաբուծություն, անասնաբուծություն , որսորդություն և հարակից ծառայություններ			
1.1	Ոչ- բազմամյա մշակաբույսերի աճեցում			
1.1	Հացահատիկային (բացառությամբ բրնձի), հատիկալնդեղեն մշակաբույսերի և ձիթատու սերմերի աճեցում	Միջին	Բարձր	Միջին
1.12	Բրնձի աճեցում	Միջին	Բարձր	Բարձր
1.13	Բանջարեղենի, դդմազգիների, արմատապտուղների և պալարների աճեցում	Միջին	Բարձր	Բարձր
1.14	• Շաքարեղեգի աճեցում	Միջին	Բարձր	Բարձր
1.15	Ծխախոտի աճեցում Ծանոթագրություն:: Այս ոլորտի ֆինանսավորումը ՎՋԵԲ-ի միջոցներով հիմնականում բացառված է- մանրամասների համար տե՛ս ՎՋԵԲ-ի հետ կնքած պայմանագիրը	Բացառված	Բացառված	Բացառված
1.16	Մանրաթելային բույսերի աճեցում (օր.՝ ջուտ, կտավատ, կանեփ, բանբակ)	Միջին	Բարձր	Բարձր
1.19	Այլ ոչ-բազմամյա մշակաբույսերի աճեցում, օր.՝ ծաղիկներ, ծաղիկների սերմեր, կտրված ծաղիկների և ծաղկեփնջերի արտադրություն և այլն:	Միջին	Բարձր	Բարձր
1.2	Բազմամյա մշակաբույսերի աճեցում (մշակաբույսեր, որոնք ապրում են ավելի քան 2 սեզոն, օր.՝ խաղող, արևադարձային և մերձարևադարձային մրգեր, ցիտրուսային մրգեր, թուփի մրգեր և ընկուզեղեն, խնձոր, բալ և այլն	Միջին	Բարձր	Բարձր
1.3	Բույսերի աճեցում (օր.՝ բույսերի աճեցում տնկման, դեկորատիվ պատճառներով, ներառյալ՝ տորֆի տրանսպլատանցիա և այլն.)	Ցածր	Ցածր	Ցածր
1.4	Կենդանական ապրանքներ			
1.41	Կաթնատու խոշոր եղջերավոր անասունների բուծում	Միջին	Միջին	Միջին
1.42	Այլ խոշոր եղջերավոր անասունների և գոմեշների բուծում	Միջին	Միջին	Միջին
1.43	<u>Չիերի և այլ ձիազգիների բուծում</u>	Միջին	Միջին	Միջին
1.44	Ուղտերի և այլ ուղտազգիների բուծում	Միջին	Միջին	Միջին
1.45	Ոչխարների և այծերի բուծում	Միջին	Միջին	Միջին
1.46	Խոզաբուծություն	Միջին	Միջին	Միջին
1.47	Թռչնաբուծություն	Միջին	Միջին	Միջին
1.49	Այլ կենդանիների բուծում (օր.՝ շներ և կատուներ)	Միջին	Ցածր	Միջին
1.5	<u>Խառը հողագործություն (ֆերմերություն)</u>	Միջին	Բարձր	Բարձր
1.6	Գյուղատնտեսության բնագավառում օժանդակ գործունեություն և բերքահավաքից հետո իրականացվող գործողություններ			
1.61	<u>Բուսաբուծության բնագավառում օժանդակ գործողություններ</u>	Միջին	Միջին	Միջին
1.62	<u>Անասնաբուծության բնագավառում օժանդակ գործունեություն</u>	Միջին	Միջին	Միջին
1.63	Բերքահավաքից հետո իրականացվող գործողություններ	Միջին	Միջին	Միջին
1.64	Սերմնացան և բույսերի բազմացում	Միջին	Միջին	Միջին
1.7	Որսորդություն, թակարդով որս և նմանատիպ գործողություններ	Բարձր	Միջին	Բարձր

		Ռիսկի մակարդակ		
Code NACE Rev. 2	Կարգ և ենթակարգ	Բնապահպան.	Մոցիալական	Ընդհանուր
2	Անտառաբուծություն և փայտամթերում			
2.1	Անտառաբուծություն և դրա հետ կապված այլ գործողություններ	Բարձր	Բարձր	Բարձր
2.2	Փայտամթերում	Բարձր	Բարձր	Բարձր
2.3	Վայրի բույսերի և անտառամթերքի հավաքում	Միջին	Միջին	Միջին
2.4	<u>Անտառային տնտեսության բնագավառում օժանդակ գործունեություն</u>	Միջին	Միջին	Միջին
3	Որսորդություն և ջրային կուլտուրա			
3.11	Ծովային ձկնորսություն	Բարձր	Բարձր	Բարձր
3.12	Ձկնորսություն քաղցրահամ ջրերում	Բարձր	Միջին	Բարձր
3.21	Մարիկուլտուրա	Բարձր	Միջին	Բարձր
3.22	Քաղցրահամ ջրերի ակվակուլտուրա	Բարձր	Միջին	Բարձր
Section B	Հանքարդյունաբերություն և քարհանքի շահագործում			
5	Ածուխի և լիգնիտի արտադրություն			
5.1	Կոչտ ածուխի արտադրություն	Բարձր	Բարձր	Բարձր
5.2	Լիգնիտի արտադրություն	Բարձր	Բարձր	Բարձր
6	Հում նավթի և բնական գազի արդյունահանում			
6.1	Հում նավթի արդյունահանում	Բարձր	Բարձր	Բարձր
6.2	Բնական գազի արդյունահանում	Բարձր	Բարձր	Բարձր
7	Մետաղական հանքաքարերի արդյունահանում			
7.1	Երկաթի հանքաքարի արդյունահանում	Բարձր	Բարձր	Բարձր
7.21	Ուրանի և թորիումի հանքաքարերի արդյունահանում	Բարձր	Բարձր	Բարձր
7.29	Այլ գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանում	Բարձր	Բարձր	Բարձր
8	Այլ հանքարդյունաբերություն և քարհանքի շահագործում			
8.1	Քարի, ավազի և կավի հանքերի շահագործում	Բարձր	Բարձր	Բարձր
8.11	Դեկորատիվ և շինարարական քարի, կրաքարի, կավիճի և սալաքարի ստացում/հանքի շահագործում/	Բարձր	Բարձր	Բարձր
8.12	Մանրախճի և ավազի հանքահորերի շահագործում, կավի և ձենակավի (կաոլինի) արդյունահանում	Բարձր	Բարձր	Բարձր
8.91	Քիմիական և հանքային պարարտանյութերի արդյունահանում	Բարձր	Բարձր	Բարձր
8.92	Տորֆի արդյունահանում	Բարձր	Բարձր	Բարձր
8.93	<u>Աղի արդյունահանում</u>	Բարձր	Բարձր	Բարձր
8.99	Այլ խմբերում չդասակարգված հանքարդյունաբերություն և քարհանքերի շահագործում (հղկանյութեր, բնական գրաֆիտ, բնական ասֆալտ, բնական պինդ բիտում.)	Բարձր	Բարձր	Բարձր
9	Հանքարդյունաբերությանը օժանդակող գործողություններ			
9.1	Նավթի և բնական գազի արդյունահանման ոլորտում օժանդակ գործողությունների իրականացում	Բարձր	Բարձր	Բարձր
9.9	Աջակցություն այլ հանքարդյունաբերության և քարհանքերի շահագործման համար՝ հետազոտական ծառայություններ, երկրաբանական դիտարկումներ, ջրահեռացման և արտանետման ծառայություններ	Բարձր	Բարձր	Բարձր
Բաժին C	Արտադրություն			
10	Սննդամթերքի արտադրություն			

10.1	Մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում			
10.11	Մսի մշակում և պահածոյացում	Միջին	Բարձր	Միջին
10.12	Թռչնամսի մշակում և պահածոյացում	Միջին	Բարձր	Միջին
10.13	Մսամթերքի արտադրություն, այդ թվում՝ թռչնամսի արտադրություն	Միջին	Բարձր	Միջին
10.2	Զկան, խեցգետնանմանների և մոլյուսկների մշակում և պահածոյացում	Միջին	Միջին	Միջին

		Ռիսկի մակարդակ		
Code NACE Rev. 2	Կարգ և ենթակարգ	Բնապահպան.	Մոցիալական	Ընդհանուր
10.3	Մրգի և բանջարեղենի վերամշակում և պահպանում			
10.31	<u>Կարտոֆիլի վերամշակում և պահածոյացում</u>	Միջին	Միջին	Միջին
10.32	Մրգերի և բանջարեղենի հյութի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.39	Մրգերի և բանջարեղենի այլ վերամշակում և պահածոյացում	Միջին	Միջին	Միջին
10.4	Բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.41	Յուղերի և ճարպերի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.42	Մարգարինի և նմանատիպ ուտելի ճարպերի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.5	Կաթնամթերքի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.51	Կաթնամթերքի և պանրի պատրաստման գործողություններ	Միջին	Միջին	Միջին
10.52	Պաղպաղակի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.6	Հացահատիկային մթերքների, օսլայի և օսլա պարունակող պորդուկտների արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.7	Հացաբովկեղենի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.71	Հացի, թարմ հրուշակեղենի և տորթերի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.72	Չորահացերի և թխվածքաբլիթների արտադրություն, Երկարատև պահվող հրուշակեղենի և տորթերի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.73	Մակարոնի, լավշայի և համանման այլուրե արտադրատեսակների արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.8	Այլ սննդամթերքների արտադրություն (շաքարավազ, կակաո, շոկոլադ, շաքարե հրուշակեղեն, թեյ և սույճ, համեմունքներ, պատրաստի ուտեստներ, համասեռված բաղադրիչներ պարունակող և դիետիկ սնունդ և այլ սննդամթերքներ)	Միջին	Միջին	Միջին
10.9	Պատրաստի անասնակերի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
10.91	Գյուղատնտեսական կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն Manufacture of prepared feeds for farm animals	Միջին	Միջին	Միջին
10.92	Տնային կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն	Միջին	Միջին	Միջին
11	Խմիչքների արտադրություն (թորած ալկոհոլային խմիչքներ, գինիներ, խնձորից և այլ մրգերից պատրաստված գինիներ, գարեջուր, հանքային ջրեր և այլ ոչ- ոգելից խմիչքներ) Ծանոթագրություն. Թորած ալկոհոլային խմիչքների արտադրության ֆինանսավորումը ՎՋԵԲ-ի միջոցներով հիմնականում բացառված է՝ մանրամասների համար տե՛ս ՎՋԵԲ-ի հետ կնքած պայմանագիրը			
11.1	Ալկոհոլային խմիչքների թորում, բազմաթորում և խառնում	Բացառված	Բացառված	Բացառված
11.2	Խաղողի գինու արտադրություն	Միջին	Միջին	Միջին
11.3	Խնձորից և այլ մրգերից պատրաստված գինիների արտադրություն	Միջին	Միջին	Միջին
12	Միսախոտային արտադրատեսակների արտադրություն Ծանոթագրություն. Այս ոլորտի գործունեության ֆինանսավորումը ՎՋԵԲ-ի միջոցներով հիմնականում բացառված է: Մանրամասների համար ստուգե՛լ ՎՋԵԲ-ի հետ կնքած պայմանագիրը	Բացառված	Բացառված	Բացառված
13	Մանածագործական արտադրատեսակների արտադրություն			
13.1	Մանածագործական թելքի նախապատրաստում և մանում	Միջին	Բարձր	Բարձր
13.2	Մանածագործվածքի մանում	Միջին	Բարձր	Բարձր
13.3	Մանածագործվածքի վերջնամշակում	Բարձր	Բարձր	Բարձր

		Ռիսկի մակարդակ		
Code NACE Rev. 2	Կարգ և ենթակարգ	Բնասպահայան.	Մոցիալական	Ընդհանուր
